


ՅԱԽԵԼԻ

ՇԱԽԵԼԱՅԻ  
ԱՐԿԱԾՆԵՐԸ



ՊԵՏՏՐԱԾ

19 AUG 2011

arm-K-39

1977

899.962-15

Y-13

ՑԱԽԵԼԻ

# ՇԱԼՎԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

(ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Վաղցերենից բարգլ. Ա.Բ. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ  
Նկարները՝ Գ. ԲՐՈՒՏՅԱՆԻ



Գ Ե Տ Հ Բ Ա Տ

ՀԱԿԱԴՐԱՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԱՎԱՐԱԿԱՆ  
ՑԵՐԵՎԱՆ

1938

ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

Յախելու իսկական անուն-ազգանունը՝ Պարմեն Քվալճբելաձե յէ: Ծնվել է 1866 թվի հունիսի 9-ին, նախկին Ռածայի նահանգի Յախի գյուղում: Յախելին դրագիտությունը սովորեց իր ընտանիքում: Յերբ նա դարձավ 10 տարեկան, նրա ավագ յեղբայր Անտոնը նրան տարավ Ստավրոպոլ քաղաք և այնտեղ հանձնեց քաղաքային ուսումնարանը: Այդ դպրոցն ավարտելուց հետո՝ փոխադրեց նրան գյուղատնտեսական ուսումնարան:

Այդ ել ավարտելով՝ յերիտասարդ՝ Յախելին առանձին քննություններ ե տալիս ուսուցչի՝ կոչում ձեռք բերելու համար: Իր մանկավարժական գործունեյությունը նա սկսել է Ստավրոպոլի նահանգի Բեշպագիր գյուղի դպրոցում:

1903 թվից Յախելին Քութայիս և փոխադրվում և նշանակվում ե վրաց լեզվի ուսուցիչ՝ նախկին «Ս. Նինոյի» որիորդաց ուսումնարանում և արական կլասիկ գիմնազիայում, վորտեղ և մնում ե մինչև իր կյանքի վերջը:

Վորպես ուսուցիչ, Յախելին տիրապետում եր իր առարկային, և միենույն ժամանակ շատ աշխատասեր եր: 18 տարի ուսուցչությամբ ե զբաղվում: Նրա շակերտներից շատերը դարձան լավ հասարակական գործիչ:

Ազատ ժամանակը Յախելին գյուղացիության հետ միասին գյուղատնտեսական աշխատանքին եր նվիրվում:



59736-66

Յախելին հեղափոխության հանդեպ յերախտառքետ է: Նա յերիտասարդության մեջ առաջ եր բերում առելություն դեպի ցարը և տարածում ցարիզմի տապալման գաղափարը: Նա չի վրիպում վոստիկանության ուշադրությունից, և 1905 թվին գեներալ Ալիխանովի ուստժիչ գորախումբը կրակի յե մատնում բանաստեղծի տունն ու տեղը և հարուստ գրադարան՝ Յախելին գյուղում, իսկ Յախելին հազիվ աղատվում է մահից:

Յախելու կյանքն այնուամենայնիվ խորհրդավոր վախճան ե ունենում: 1919 թվի ոգոստոսին, իր սեփական բնակարանում, անհայտ չարագործները կյանքից զրկում են 53 տարեկան ալեխառն բանաստեղծին:

Յախելին իր գրական գործունեյությունն սկսել է 1883 թվից: Նրա առաջին բանաստեղծություններն ու սոսապելիները մանկական ելին: Նա աշխատակցել է այն ժամանակի միակ մանկական «Նորբաթի» ամսագրին (լույս եր տեսնում 1883-1885 թ. թ.): Այդ ամսագրի ուղղությունը հիմնականում մանկավարժական էր:

Ահա այդ ամսագրում ե սկսում Յախելին առաջին անգամ տպագրել իր ստեղծագործությունները յերեխաների համար և ամսագրի հենց առաջին համարում լույս ե տեսնում «Մարինե» ժողովրդական լեզենդը: Պատմական բնույթ ե կրում նրա յերկրորդ լեզենդը՝ «Զաալին», վորը տպագրվում ե նույն ամսագրում, 1884 թվին:


Նույնպես պատմական, հայրենասիրական և հերոսական բնույթ ե կրում նրա հանրածանոթ պոեմը՝ «Ասպետ Գուրգենը», վորն իր ժամանակին սիրելի յերպլրոցական յերեխաների համար:

Բացի գրանից, Յախելին գրում եր նաև մանկական այնպիսի բանաստեղծություններ, վորոնց նպատակը խրատն ու դաստիարակությունն եր: Յախելին ուսուցիչ եր և աշխատում եր մոտիկ կանգնել յերե-

խային, նրա հոգեբանությանն ու կոնկրետ պահանջին:

Յախելու բանաստեղծություններն առաջին անգամ ե առանձին գրքով հրատարակվեցին 1935 թվին, Վրաստանում: Տպագրված ելին առանձին գրքույկով միայն «Ասպետ Գուրգենը» 1893 թ. և «Շալվայի արկածները» (հրատարակված յերեք անգամ՝ 1885, 1892 և 1903 թ. թ.) պոեմները, վերջինի անունով ել կոչվում ե այս ժողովածուն, քանի վոր Յախելին գլխավորապես հայտնի յե այս պոեմով վրաց մանկական գրականության մեջ:

# ՇԱԼՎԱՅԻ ԱՐԿԱՇՆԵՐԸ



Գիրք գրեցի յես ձեզ համար,  
Փոքրիկ, փոքրիկ իմ լորիկներ,  
Մարդարիտներ իմ թանկադին.  
Թող այն լինի ձեզ մի նվեր:

1.

Չարաճճի և անհանգիստ  
Յերեխա յեր փոքրիկ Շալվան,  
Անփույթ, անզործ՝ ցատկոտել միշտ  
Ու ծիծաղել սիրում եր նա:  
Մինչեւ տարբեր իր խաղերից—  
Ցատկոտելուց չեր ձանձրանա,  
Ով ել ուզեր նրան խրատել—  
Զուր եր անցնում փորձը նրա:  
Յեվ նա ահա դրա համար  
Հանդիպել ե շատ փորձանքի,  
Լաց ե յեղել, ամեն անզամ  
Մորմոքելով ու դառնագին:  
Մի որ Շալվան իրենց այլում  
Վաղ եր տալիս և որորվում.  
Նա ուզում եր գտնել մի բան,  
Վոր չարություն նորից աներ,

Յեվ իր փոքրիկ գիրքը հանկարծ  
Յանկապատին մոտիկ գցեց,  
Ու նկատեց հենց այդ պահին  
Մեղուներով լիքը փեթակ.  
Մեղուները տոտիկներով  
Կրում եյին բերքը՝ արագ:  
Հաճախ նրանց ձայնը զվարթ՝  
Լսվում եր պարզ, ինչպես հնձերգ,  
Յեվ զարմացած մանուկը լուռ  
Դիտում եր հենց նրանց մեկ-մեկ:  
Նա մտածեց վերջում այսպես.  
«Մրանց՝ բնից կըքչեմ դուրս,  
Ու կըտեսնեմ, թե մեջն ինչպես  
Մեղուները դործ են անում»:  
Հետո ճիպոտն առած ձեռքին՝  
Նա վեթակին գնաց մոտիկ.  
Զեր թշնամին թող այն տեսնի,  
ինչ վոր տեսավ Շալվան փոքրիկ:  
Ու մեղուներն իրար անցան,  
Թե՛ հարձակվեց մի թշնամի,  
Դե՛հ, յեղբայրներ, մենք միաձայն  
Յեկեք խայթենք սրան հիմի:  
Յեվ դուրս յեկան միահամուռ,  
Իրար սիրով ձայն տվեցին,  
Հարձակվեցին այնպես ամուռ,  
Վոր վերջ չկար նրա լացին:  
Ուռած Շալվան յերբ տուն գնաց՝  
Հաղիվ նրան ճանաչեցին...  
Ա՛յ դու անպետք, գիրքը թողած՝  
Չարություն ես անում ելի:

2.

Մի անդամ ել՝ Շալվան մի մեծ  
Կապոց տեսավ վերև դրած,  
Մի քիչ մնաց ու մտածեց,

Ինչ վոր վիշեց խելքին հանկարծ .  
Յեվ նա հիշեց, ինչպես Աղեն  
Պահեց ինձոր կարմիր-կարմիր,  
Բայց ուր պահեց, նա չգիտեր,—  
Արի ու դու հիմի գտիր...  
Ասաց Շալվան. Թեև թաղցրին՝  
Գործ դնելով ինչ-վոր հնար,  
Դժվար Հո չե՛, յես դարակից  
Յած կը բեմ այն ինձ համար.  
Վոր աթոռներն իրար դնեմ,  
Վար կթափեմ յես խնձորներ,  
Մի մաս կուտեմ, ու մի մասն ել  
Փոքրիկներին կտամ նվեր:

Աթոռները շարեց կողքին,  
Մեկի վրա մյուսը դրավ,  
Ապա յելավ խինդը դեմքին  
Ու բարձրացավ նրանց վրա.  
Թեքվեց վերին աթոռն ահա,  
Չիմացավ, թե ինչպես շխկաց,  
Ու թրմփաց չար յերեխան՝  
Գըլուխն ի վայր գետին փռված:  
Նրա փոքրիկ մարմնի վրա  
Առաջ յեկան խոր ուռուցքներ.  
Խոկ ճակատի վերքը նրա—  
Ասես կպած ընկույզ լիներ:  
Յեվ վեր կացրեց Աղեն հաղիկ՝  
Յերեսն ի վայր ընկած տղին,  
Հետո ասաց. «Լավ չե՛, վորդիս,  
Բան դողանալ վոչ մի տեղից»:

3.

Չուզեց կրկին հանգիստ մնալ  
Շալվան տանը վոչ մի բռպե...  
Ու մտածեց, — արի, գնամ  
Այնտեղ՝ յերկրորդ սենյակը մեր,

Ողեյի մոտ, ինչ վոր մեկի  
Զայնն ե դալիս ինձ անծանոթ.  
Գուցե՝ դաթա բերած լինի—  
Խորիսիս մեջ, անուշահոտ... .

Գաղտագողի նա մոտեցավ.  
Փոքր ինչ ահա դուռը բացեց,  
Իր Աղեյի ընկերուհուն՝  
Նա գողի պես ծածուկ նայեց:  
Շունչը պահած դռան յետեւ՝  
Լուռ լսում եր խոսակցություն.  
Փոքրիկ անցքից աչք եր դցել,  
Բայց համարձակ ներս չեր մտնում:  
Ու այդ պահին նա չխմացավ,  
Ինչպես մեկը դուռը բացեց,  
Նրա քթին ամուր կպավ,  
Վոնց ջուր՝ արցունքն աչքից թափեց:  
Լսեց խսկույն լացը նրա՝  
Հայրը ծերուկ, արծաթահեր,  
Տեսավ վորդու դեմքը ուռած  
Յեվ արցունքի առատ շիթեր:  
Վորդուն ասաց. «Պահակ կանգնել,  
Լսել ծածուկ մեկ ուրիշի՝  
Ամոթ ե խիստ, անպատճեր,  
Հեռու մնա, քեզ վայել չի:  
Յեվ ում հետ վոր դու գործ չունես՝  
Ինչո՞ւ համար լսել նրան.  
Շալվա՛, վորդիս, թե խելք ունես,  
Չարության տեղ լավ բան արա»:

4.

Մեկ ել՝ Շալվան տան անկյունում  
Տեսավ դրված մի մեծ սնդուկ,  
Իրեն զսպել ել չեր լինում,

Յովլ յեռանդից սիրուն եր թնդում:  
 Աւ մտածեց. «Արի, բանամ,  
 Գուցե մի բան մեջը լինի»՝  
 Աղեն յերեկ ինչ-վոր մի բան  
 Այնտեղ պետք է պահած լինի:  
 Յեվ մոտեցավ նա սնդուկին,  
 Աւ չարչարվեց նա միայնակ,  
 Յեվ վերջապես հենց վոր բացեց,  
 Գըլուխն անցրեց մեջն համարձակ.  
 Սակայն հանկարծ փոքրիկ տղան  
 Մայթաքերով պինդ ընկավ ցած,  
 Կափարիչը շարժվեց տեղից,  
 Գլխին հասցրեց ամուր հարված:  
 Լաց եր լինում Շալվան ցավից,  
 Թպրում եր, արցունք թափում,  
 Մերթ գրլուխն եր արկղին տալիս,  
 Մերթ հատակին վոտքով զարկում...  
 Նրա բախտից Աղեն յեկավ  
 Յեվ ազատեց իր Շալվային,  
 Հանդիմանեց կրկին անդամ,  
 Արբաս ավեց, վոր ել շոնի:  
 Ասաց նրան.— «Դու այլքան չար,  
 Յեվ, անհանգիստ պահում ես քեզ.  
 Բակ է, նստիր ու գիրք կարգու,  
 Յեղիք հանդիսաւ, խելոր ու հեղ»:  
 Նա շեր կարող արդարացնել  
 Իր խայտառակ վարքը նորից,  
 Յեվ տանջվում եր ցավից անվերջ,  
 Յեվ այրվում եր խիստ ամսոթից:

5.

Շալվան՝ ծածկված մի մեծ զամբյուղ  
 Տեսավ գրված տան անկյունում.  
 Յերբ մոտեցավ նա աներկյուղ՝

Այսպիսի միտք ծագեց գլխում.  
 «Մեջը կա սեխ և ձմերուկ,  
 Վոր պահել և Աղեն նորից,  
 Արդեն գիտեմ տեղը, ծածուկ  
 Կը վերցընեմ այդ զամբյուղից...»  
 Մոտեցավ նա, ձեռքը մեկնեց,  
 Աւզեց հանել սեխ զամբյուղից,  
 Այլ բան տեսավ բայց սեխի տեղ,  
 Աւ հետ քաշվեց նա յերկյուղից:  
 Յեվ գողովթյան միտքը հետին՝  
 Լուս չքացավ նրա գլխից,  
 Մատին կպավ մի խեցգետին,  
 Կծեց նրան: Գոռաց ցավից...  
 Այդ գոռոցից մայրը նրա  
 Վաղեց խկույն դեպի վորդին,  
 Ծիծաղելով փրկեց նրան,  
 Մատից պակեց մի խեցգետին:  
 Ասաց.— «Շալվա, զու խելոք չես,  
 Կըծկվում ե սիրտըս վախից,  
 Խմացիր, բան չեմ տալու քեզ,  
 Այս խեցգետինի վոտից բացի»:

6.

Խաղի համար խիստ տաքացած՝  
 Շալվան տանը ըշհամբերեց,  
 Յեվ գուրս յեկավ ու վաղեց ցած,  
 Մանոթ այլուն մոտիկ կանգնեց:  
 Յեվ իր աչքով այնտեղ տեսած  
 Խաղողը խակ, տանձն ու խնձոր  
 Յերեացին նրան հատած—  
 Անուշահամ ու մեղքածոր:  
 Յեվ մտածեց. «Արի ծածուկ  
 Մանեմ այդի, ու լուս՝ քաղեմ,  
 Ինչքան կերտ, կուտեմ խաղող,  
 Մընացածը տուն կըտանեմ»:

Ասաց ու նա ցանկապատից  
 Ձեռքը մեկնեց հասած մրգին,  
 Համը առավ ու հիացավ...  
 Ուզեց Շալվան քաղել կրկին:  
 Այդ ժամանակ փշոտ մի ճյուղ  
 Ամուր բռնեց թևը նրա,  
 Ուզեց պոկ գալ, բայց, ո՞յ, կախվեց  
 Ցանկապատից գըլուխն ի վայր.  
 Միտք եր անում. «Այսոր արդեն  
 Բանըս բուրդ ե... ու ճար չկա,  
 Ինձ չի կարող մայրըս դտնել,  
 Հորաքըոջ հետ վոնց ել ման դա:  
 Յերբ վոր մթնի, դայլը կռա,  
 Յել ինձ պատառ-պատառ կանի,  
 Ել չեմ տեսնի յես սարն ու քար,  
 Որվա լույսը, կյանքն աշխարհի»:  
 Սակայն շուտով, ասես բախտից,  
 Այդեպանը տեսավ նրան.  
 Յեկավ, իսկույն ցանկապատից  
 Նրան բռնեց ու ցած բերավ:  
 Ասաց նրան.— «Քեզ կծեծեմ  
 Այդ գողության համար մի լավ,  
 Այստեղ ահա քեզ կպահեմ  
 Ու կթողնեմ սոված-ծարավ»:  
 Յել լացացրեց ահա նրան՝  
 Մի լավ ծեծված կատվի նման,  
 Ականջներից ամուր քաշեց  
 Ու դուրս արեց, վոր տուն դնա:

7.

Յել մի անդամ Շալվան գնաց՝  
 Ինչվոր տեղից ճարեց մի կարթ,  
 Սարքեց, ծայրին վորդ ամրացրեց,  
 Ու վազ տվեց գետակի ափ:

Նա մտածեց. «Այս ջրի մեջ  
 Չուկ եմ տեսել յես շատ անդամ,  
 Ուրիշները թե կրոնեն,  
 Յես նրանցից հետ կմնամ:  
 Կարթը ձեռաց յես կիջեցնեմ  
 Ահա այստեղ, ջուրը պղտոր,  
 Միշտ ել այսպես ձուկ կրոնեմ,  
 Տուն կտանեմ յես ամեն որ»:

Ու պահպանեց ձուկ վորսալու՝  
 Ինչքան գիտեր՝ կարդ ու կանոն.  
 Նա թափ տվեց ճիպոտն ամուր,  
 Կարթը ձգեց ափը ծանոթ:  
 Բայց զուր անցավ ջանքը նրա,  
 Կարթը շեղվեց նպատակից.  
 Կարթի թելը պտույտ յեկավ  
 Ու կախ մնաց ծառի ճյուղից:  
 Մտածում եր. «Անտե՛ր մնաս,  
 Թե չկառչեր ծառի ճյուղին՝  
 Տաս ձկից շատ մինչեւ հիմա  
 Կըշարեյի ջրի ափին:  
 Ել ճար չկա, պետք ե յելնեմ  
 Այդ անպիտան ծառի վրա,  
 Վոր իմ կարթը ներքեւ բերեմ,  
 Ու ձուկ բռնեմ յես հենց հիմա»:  
 Շալվան ահա արագ-արագ  
 Սողոսկելով յելավ ծառը,  
 Ճյուղին հատած՝ նա կանգ առավ,  
 Վոր ազատի հիմա կարթը:  
 Բայց յերբ հանդիսատ բռնեց ամուր  
 Նա իր ձեռքով կարթի թելից,  
 Ճայթոց լսվեց ակնթարթում,  
 Ճյուղը պոկվեց բարակ տեղից,

Յեվ նա իսկույն այդ ճյուղի հետ  
Յերեսն իւ վայր գետակն ընկալ...  
Վեր բարձրացավ, նորից սուրբից:  
Այդպիս ահա նա հազիվ հաղ  
Դեպի ափը առաջ լողաց,  
Յեվ տռւն զնաց նա վազե վազ,  
Ու դառնագին, լացակամած:

8.

Շալվան ուներ մի շուն՝ Մուրա,  
Բրդուս ու մեծ, ու եր մորթին,  
Պոչը փունջ-փունջ, աչքը կրտե,  
Ականջները փաթիլ-փաթիլ:  
Մուրան անգործ՝ որ-ցերեկով  
Պառկում եր զուրու՝ արևի տակ,  
Իսկ գիշերը՝ իր հաջոցով  
Տունն եր հսկում, վորպես պահակ:  
Մի որ գրւին իր թաթերին՝  
Պառկած եր չունն այնտեղ՝ բակում,  
Ականջը կախ, իսկ աչքերին  
Իջել եր նոր անուշ մի քուն:  
Շալվան թեև դիտեր չատ լավ,  
Վոր չեր սիրում Մուրան կատակ,  
Սակայն գարծյալ նա մոտեցով,  
Վոտքով տվեց ամուր մի զարկ:  
Յեվ մրմուց շունը ծույլ-ծույլ,  
Քանի դեւ նո չեր կատաղել,  
Ու գրանից՝ Շալվան սրտում  
Ինչվար հրճվանք ըզգաց թեթև:  
Ուզեց նրան կատաղեցնել,  
Ու սեղմեց պոչն իր վոտի տակ,  
Այդ ժամանակ շունը հանկարծ  
Թուավ տեղից, ինչպես կայծակ:  
Սարսափելի մանչոցով՝

Պտույտ պործեց նա խոր դաղված,  
Կատաղությամբ ու հաջոցով  
Իսկույն ցատկեց դեպի Շալվան.  
Յերբ մոտեցավ շունը ցատկու՝  
Բանեց ամուր նրա վոտից,  
Զարաձձի Շալվան այսպես  
Նորից ըզգաց ցավ ու կսկիծ:  
Յեվ նա հանկարծ ցեխումն ընկալ,  
Շան յերկուողից չշմել եր խիստ,—  
Կծոտել եր Մուրան այնքան,  
Մինչև ըզգաց իրեն հանդիսու...  
Զայնի վրա լեզապատառ՝  
Թուավ տեղից մայրը նրա,  
Շունը հազիվ պոկեց վորդուց,  
Վոր ընկած եր յերեսն ի վայր:  
Նախաքան նրան կպառկեցներ,  
Լվաց նրա վռտն արյունոտ,  
Վերքի համար նա մտածեց,  
Գնաց իսկույն բժշկի մատ:  
Կապկալեցին վերքն արյունոտ  
Վոտքի վրա՝ ամուր խածած.  
Դեղ խմեցը մի գառնահոտ.  
Նա անկողնում յերկա՞ր մնաց.  
Վերջը՝ հազիվ-հազ կազզուրված՝  
Վոտքի կանդնեց ու վեր յելավ,  
Յեվ հետագա կյանքի համար  
Աւղեց պահել իրեն շատ լավ:  
Յեվ ասաց նա. «Մորից ծածուկ  
Ել չե՞մ գնա յես վոչ մի տեղ,  
Թե չե ահա ամեն անգամ  
Կըտուժեմ յես այսպես անմեղ:  
Խելքի ըերեց վերջերսս ինձ  
Մուրան իսելոք, հսկա մի շուն,  
Կատաղում է իս կատակից...  
Ատամները՝ սուր ալմաստից:


Կանաչ դաշտում թրվոալիս՝  
Շալվան լսեց ինչ-վոր մի ձայն,  
Նա կանչում եր, ձայն եր տալիս,  
Վոր ինքն արագ մոտը գնար:  
Յեվ նա գնաց չոր ծառի մոտ,  
Դիրքը դրեց ահա կողքին,  
Նստեց այնտեղ և մտածուտ  
Ականջ դրեց անուշ յերդին:  
Տեսավ սիրուն բույնը՝ ծառին,  
Վորից տկլոր ու խղճալի  
Նայում եյին նրան վերից՝  
Չափուկները սև աղոավի:  
Տղան ձայնեց. — «Յես ձեզ մատա՛ղ,  
Այս ի՞նչ հրաշք բան տեսա յես.  
Չե՛մ լարի յերեք թակարդ,  
Ու կրօնեմ սրանց այնպէս:  
Ուր կփախչեն սրանք անթե,  
Գնամ, բերեմ ձեռաց սանդուխ,  
Չարաճճի ձագերը սև՝  
Ներքե բերեմ բոլորից շուտ:  
Յեվ նա շտապ այգի վազեց,  
Գործը նրան խինդ եր տալիս,  
Այնտեղից մի սանդուխ բերեց  
Ու այն հենեց յերկար ծառին.  
Յերբ վոր նրա ծայրը հասավ,  
Սանդուխն ահա շարժվեց թեթև,  
Կորցնելով իրեն Շալվան՝  
Գոլուխն ի վայր ընկավ ներքե:  
Վզին՝ սաստիկ մի ցավ ըզգաց,  
Վնաս տվեց վոտ ու ձեռքին.  
Յեվ խեղան յերբ վեր կացավ՝  
Լուռ հեկեկաց ցավ ու վերքից:  
Տուն հասնելիս՝ Աղեն ասաց.

59736-66

— Մի՛ դառնացնի մեր կյանքը դուք,  
Քեզ լավ պահիր ու խելոք կաց,  
Դարդից մարդու սիրտն ե ճաքում:

10.

Յեվ մի անգամ թռչկոտելով՝  
Նա դաշտ գնաց ըզբունելու,  
Ու վաղ տվեց խիտ թփերով,  
Անցավ-գնաց տանից հեռու:  
Այնտեղ տեսավ նա ծաղիկներ,  
Նրանց վրա՝ թիթեռնիկներ.  
Մոտեցավ նա, ու ձեռներով  
Աշխատում եր նրանց բոնել:  
Սակայն ինչքան թիթեռ բռնեց՝  
Սատկոտեցին նրա ձեռքում.  
Ու Շալվայի սիրտը ցավեց.  
Նստեց ծառի տակը՝ տրտում:  
Յեվ նա ասաց. «Խե՛ղձ թիթեռներ,  
Չեզ հետ ինչքա՞ն վատ վարվեցի,  
Կյանքից ահա զրկեցի ձեզ,  
Մի որը ձեր՝ դառնացըրի:  
Թռչուններին արի լսեմ  
Ու սովորեմ յերգը նրանց,  
Դայլայլները նրանց պես-պես՝  
Գուցե լավ բան ասեն հանկարծ»:  
Ու հանձնըվեց իր մտքերին՝  
Շատ անհանգիստ, չարաճճի,  
Ականջը միշտ նրանց յերգին՝  
Սիրտն եր թնդում ամեն կանչից.  
Դայլայլում եր սոխակն անուշ,  
Չայնը սփոռում նա չորս բոլոր,  
Մերթ արտուտը ճախրում եր լուռ,  
Թեվիկներով վայլուն ու նոր...



Այդ ժամանակ՝ Շալվան հանկարծ  
Խայթոց ու ցավ ըզդաց մարմնում.  
Նա վախեցավ... յեվ մոռացա՛վ  
Թռչունների յերգն ու խնդում:  
Յեվ վազ տվեց նա դեպի տուն՝  
Գորդուալով, թե՝ «Ողնեցե՛ք,  
Մըջունները ծակծկեցին...  
Յեկեք հագիս շորն հանեցե՛ք»:

---

Նրա ձայնից մայրը յեկավ,  
Տեսավ այնտեղ իր Շալվային,  
Հանեց շորեր, ոո՛րն հազցրեց,  
Վոր չտանջվեր այդ ցավերից:  
Ասաց վորդուն.— «Ա՛յ անպիտան,  
Ինձ քո վախից մի տանջիր լուս...  
Ել վոչ մի տեղ քեզ չեմ թողնի,  
Ու կպահեմ փակ սենյակում»:

### 11.

Ինչ-վոր մի տեղ Շալվան գտավ  
Մի առավոտ փոքր ինչ վառող,  
Յեվ նրա հետ խառնեց ծծումբ,  
Քիչ ել ածուխ, յերկաթ ժանուա.  
Ասում եր նա. «Մի թղթի մեջ  
Կփաթաթեմ այս նյութն ամրուղ,  
Վեր կնետեմ դեպի յերկինք  
Գնդակի պես՝ կրակ-վառող:  
Հայրս թեյեվ ինձ չեր թողնում,  
Վոր անեյի նման մի բան,  
Բայց նա հիմա սենյակում չե,  
Ու արդելքներ իմ դեմ չկան»:  
Ասաց ու նյութն իր հավաքած

Դարձրեց թղթի մի լավ կապոց,  
Յեվ գուլըս բերեց ահա կրակ,  
Վոր վառողին տար հուր ու բոց:  
Յեվ թղթի մեջ՝ այդ ժամանակ  
Պայթեց վառողն տյնողես հանկարծ,  
Վոր յերեխան բոց-ծխի տակ՝  
Կորավ մի պահ ու չերեվաց:  
Մեջքի վրա դետին ընկած՝  
Շալվան ահա ուշաթափված՝  
Կարծում եր, թե մեռել եւ հենց,—  
Ու այդպես նա յերկա՛ր մնաց:  
Դեմքը նրա՝ շատ եր փոխվել,  
Անսովոր եր դարձել այնքան,  
Ճաքճքել եր, վերքով լցվել,  
Գլխին արդեն ել մազ չկար.  
Նբա աչքի թարթիչներից՝  
Մինչև անդամ բան չմնաց,  
Այտն ու հոնքը վառվեցին խիստ,  
Դեմքի գույնն ել խսպառ գնաց:  
Յեվ գոռում եր.— «Խղճացե՛ք ինձ.  
Անբախտ ու խեղճ, այսպես զրկված  
Մազից, հոնքից, թարթիչներից,  
Այսուհետեւ ել ո՞ւր գնամ:  
Մարի չարի ծնողներիս  
Տված լավ-լավ խրատներին,  
Անկարգությունն ու չարություն՝  
Իմ խեղճ գլխին փորձանք բերին»:  
Հետագայում թեև Շալվան  
Լուս եր, խելոք ու շատ հանգիստ,  
Բայց այն սիրուն, լավ յերեխան—  
Այլանգակված, տղե՛զ եր խիստ:

---

# ԽԵՂՃ ՊԱՐԻԿԸ



1.

Հողմն եր վոռնում ու գալարվում,  
Գիշերն եր մութ և անհանգիստ...  
Ա՛խ, փոթորիկն անտեր-անտուն,  
Վոչ խիզճ ունի, վոչ գութ, վոչ սիրտ:  
Ծառերն ենա ճոճում ուժդին  
Յեվ վոռնում եր բորենու պես,  
Զկա՛ դրսում շունչ մի հետին,  
Վոչ ել գաղան սոված ու մերկ:

---

Հողմն ե վոռնում ու գալարվում,  
Յեվ սար ու ձոր թնդում են խուլ,  
Իր սիրած մոր՝ հողի կրծքին՝  
Ծաղիկն ընկավ լուռ ու տիուր:  
Զյուն ե գալիս... ու փաթիլներն  
Փայլիլում են հաղար ձեի.  
Հողմն ե թնդում, յերկինքն առնում՝  
Զյունն անելով հողմացրիվ:  
Գիշերն ե մութ, խոր ու խավար,  
Դժոխքի պես մուռ ու խուլ,

Հողմից գետինն այն սառցապատ՝  
Լաց ե լինում ու վողբում լուս:  
Յերկնի կամարն իջել ե ցած,  
Խըսով ու սե՛ լո՛ւս տարածված,  
Աչքերը փակ կույրի նման՝  
Յերկնքը մութ, վոնց գերեզման:  
Մինչև կուրծքը թաղված ձնում՝  
Գալիս ե լուռ շավզով Զալին,  
Այդ ծերունին չե՛ր իմանում  
Ուր ե գնում այս չար ժամին.  
Նմանվում եր թումբը թմբին,  
Կորցըրել եր ճամբան յերկար,  
Մութն եր իջել նրա աչքին,  
Որցերեկով լույսը չկար:

---

Քայլում եր նա խոր ձյուներում,  
Ինչպես մարտիկ, բայց հոգնաբեկ,  
Զահելության ուժից զրկված,  
Ծեր, և՛ հոգնած, և՛ կիսամերկ:  
Նստեցրել եր թոռանն ուսին,  
Ութ տարեկան վորբ Գիգովին,  
Յրտից սառած զողում ե նա,  
Տերեն ինչպես ծառի ճյուղին:  
Յեվ ծերունին՝ ճանապարհին  
Ճեղքում ե բռւքն իր թույլ կրծքով,  
Ու հասնելով բլուրներին՝  
Իջնո՞ւմ ըզդուշ նրանց լանջով:  
Գիշերն ե մութ, հողմը լալկան,  
Ինչպես զժոխք, խավարամած,  
Բուքը ուժդին՝ յերկինքն առած՝  
Ճամբան գնալ դժվարացա՛վ:

---

Բանը բուրդ ե, թույլ ծնկների  
Ուժը նրան դավաճանեց,

Բուրքն անթափիանց ու կատաղի՝  
Խեղճ ծերունու հոգին հանեց:  
Նստեց անձյուղ ծառի տակին,  
Ու չի շարժվում լեզուն ցրտից,  
Լուսմ է նա լացը հողմի,  
Յեվ պատում է սրտին թախիծ:  
— Պաղիկ, սոռա... ա'խ,

Քարացա...—

Հաղիվ Գիգոլն ասաց տիսուր:  
— Դոռա՛, գուցե մեկը դուրս դա,  
Յեվ ուղեկցի մեղ մինչեւ գյուղ,  
Թե չե լուրքն է հա սաստկանում,  
Սարսափում եմ այդ ձայներից.  
Հողմը մի տեղ մեղ կըզցի,  
Ու կըկորչենք մենք այս որից:  
Յեվ գոռում է Զալին ահա,  
Բստանում է ուժ ու յեռանդ,  
Ու գոռալիս մնում է հա,  
Վոր դիմացից պատասխան դա:  
Բայց ձայն չկա վոչ մի տեղից,  
Բամու վոռնոցն ահա նորից,  
Յեվ վորբացած յերկրին տիսուր՝  
Մութին է պատել ամեն կողմից...  
Վոտքի յելավ գարձյալ Զալին,  
Յեվ գնում է հա տնքալով,  
Միշտ զարկում է նրան քամին,  
Առաջն առնում վնդստալով.  
Մերթ դցում է նրան աջ կողմ,  
Մերթ բերանը լցնում բքով.  
Մի թիզ ճամբան նրա համար  
Զգված ե՛ զոռ ինչպես մի ծով...  
2.

Մեղքը լինի նրա վզին,  
Ով այս որը սրան դցեց.

Փոքրիկ Գիգոլն՝ այս ծերունու  
Ապավենն է ու հույսը մեծ:  
Ուզում եր՝ թոռն ուսում առնի,  
Միշտ այդ մասին միտք եր անում,  
Ասում եր նա. «Ուսումն է թուր՝  
Դառն ու դժար մեր ես կյանքում»:  
Հոսկասում եր այսպես ուսմանն  
Ու հաշվում եր որը-որին.  
Ոգոստոսի վերջում ահա  
Քաղաք տարավ նա Գիգոլին.  
Նրան ասին.— «Այս դպրոցում  
Վոր տեղ չունենք, ինչպե՛ս անենք,  
Թե կըքերես հունվար ամսին,  
Առանց խոսքի մենք կընդունենք»:  
Յեվ հունվարն ել ահա յեկավ,  
Զալին քաղաք գնաց նորից.  
Հասավ դպրոց, տեսավ մեծին,  
Վոր նայում եր պատշգամբից:  
Իսկ այդ զոռոզ հոգաբարձուն  
Հոնքը կիտեց ու բարկացավ,  
Այդ շատ պարզ եր մեր ծերունուն,—  
Սբում ըզգաց խորունկ մի ցավ:

Յերբ նա հասավ, ծունկը չոքեց.  
— Աստված սիրես, մի ճա՛ր արա,  
Իմ ծերության որում,— ասաց,—  
Հույս-աղավենս մնում են սա,  
Ախ, ուսումից զուրկ մի՛ք թողնի,  
Ընդունեցե՛ք իմ Գիգոլին,  
Կարոտ ուսմանն ու պիտանի—  
Զեր ծառան է նա այս որից:  
Վո՛չ աղաչանք, վո՛չ պաղատանք  
Չը մափկացը սիրոը մեծի,

Յեկ նա տվեց «վոչ» պատասխան...  
 իր վշտի հետ մնաց Զալին,  
 Մտածում եր. «Այսպես ել բան,  
 Հարդ ենք տալիս, անհաց մնում,  
 Տալիս ենք և՛ ուսման համար,  
 Բայց այդ անտերն ո՞ւր ե գնում...»  
 Ու պաղատեց նա նորից-նոր.  
 — Գթո՛տ յեղեք այս հասակիս,  
 Ուսում տվեք իմ Գիգոլին,  
 Ել հող չկա վոտիս տակին:  
 Հոգաբարձուն վրան գոռաց.  
 — Գնա՛, կորի՛ր, թափառակա՛ն...  
 Զահես տարավ շունը պառավ,  
 Ուսում տվեք, ուսմա՛ն յեկանք...

Յեկ դուրս արին Զալուն ահա...  
 Նա հետ դարձավ վշտի ծովով,  
 Հետն ել տխուր թոռը նրա—  
 Սիրտը խորով ու խոցերով  
 Հողմը յելավ ճանապարհին,  
 Զյունը թափվեց ճերմակ ու խոր,  
 Ու տառապած մեր ծերունին՝  
 Գնում ե լուռ, սիրտը մոլոր...

3.

Գնում ե նա... գիշերը մութ  
 Ծանրանում ե, հա՛ ծանրանում,  
 Հողմն ե վոռնում, հողմը ցատկուտ,  
 Բուրը ձյունի՛ վե՛ր գալարվում,  
 Գետինն առնում, թուսիք պոկում.  
 Կայծակից ել ահեղ ե նա,  
 Ապտակ տալիս նրա դեմքին,

Ու չի՛ թողնում վոտքի վրա:  
 Ու մաշվել են, մաշվել իսպառ,  
 Տրեխները նրա վոտքի,  
 Ու կախվել են, վորպես լուլա,  
 Սառցե շիթեր բեխի տակին:  
 Պատըովել ե ոձիքն ահա,  
 Կուրծքը տկլոր, ինքը անտուն...  
 Վնտե՛ր մնաս, անիծյալ բախտ,  
 Կյանք չե՛ս տվել դազող մարզուն:  
 Ել ուժ չունի, վոր պայքարի,  
 Վայող բքից խեղզվում է նա,  
 Յերբ ընկնում ե, ծանր ե գալիս...  
 Ուժատ տեղից վո՞նց վեր կենա:  
 Սառցե վոտքը, ինչպես և ձեռք.  
 Իսկ հոնքերից սառույցն ե կախ,  
 Նա նվազեց... մեռավ օասես,  
 Թեև բերնում դեռ շունչը կա:  
 Փորած փոսում նա կուչ յեկավ,  
 Իր Գիգոլին սեղմեց կրծքին,  
 Ու չոր հանեց վրայից նա,  
 Յեկ փաթաթեց իր վորըուկին:  
 Ինքը մնաց ահա տկլոր,  
 Յեկ ընկած ե ճղված շապկանց,—  
 Միայն փրկի իր Գիգոլին,  
 Այդ եր ուզում Զալին որտանց:

---

Հողմն ե վոռնում, յերկինքն առնում,  
 Դաշտն ե վողբում լուռ, տխրայի...  
 Գազանն ահից նստած վորջում՝  
 Սիրտ չի անում մի քայլ անի:  
 Ճնճղուկին ել բախտն ե ժպտում,  
 Թուփին ե մտել նա գողունի,

Սակայն միայն Զալին անտուն՝  
Թագնըլելու մի տեղ չունի:

Հին փոսի մեջ պապը անշարժ՝  
Իր Գիգոլին գիրկն է առել.  
Նա նստել ե գըլուխը կախ,  
Կապտել անչափ ու լուռ սառել,  
Կարծես լինի ուշքը կորցրած,  
Անձայն ու խեղճ արձան մի սառ,  
Յեվ շապիկն ել մեջքին ձղված՝  
Կախվել ե հա պատառ-պատառ:  
Սառնամանիքն ել չի ըզդում,  
Դանդաղ իջնում ե խոր մի քուն,  
Ուրվականներն աչքի առաջ՝  
Պտտվում են հանդիստ ու լուռ...  
Ընկել ե նա յերազ աշխարհ,  
Տեսնում ե նոր, անուշ յերկիր,  
Ուր չի տանջվում նա անարդար,  
Թափառական ու տարագիր:  
Իր Գիգոլը շատերի հետ  
Սովորում ե, գիրք ե կարդում,  
Ուսման գործում առաջավոր՝  
Շատերին ե գործով հաղթում.  
Խինդ ե առնում սիրտը նրա,  
Վոր փոխվել ե կյանքն անհանգիստ  
Նա տեսնում ե ահա ստհման,  
Վերացել են տանջանքն ու վիշտ...

4.

Առավոտ ե... հողմը հանդավ.  
Զյունը գալուց յերբ դադարեց՝  
Արևն ահա յելավ հանկարծ,

Խեղճ Գիգոլին սիրով նայեց.  
Տղան մեկ ել չորերն հանեց,  
Զերմ արևը աչքով չափեց,  
Յեվ անսահման սեր ու խինդից՝  
Քիչ եր մնում արցունք թափեր:  
Ու ձայն տվավ իր պապիկին.  
— Ազատվեցինք, դեհ, գնանք տուն,  
Վեր կաց, գնանք ձեռքը-ձեռքի,  
Արևն վերից աչքն ե թարթում...

Բայց պապիկը նստած է լուռ...  
Դեմքը անշարժ ու թախծալի...  
Գիգոլն ահա նորից տխուր  
Ու զարմացած՝ ձայն ե տալիս:  
Չեռ ե տալիս նա ծերունուն,  
Վոր զարթեցնի, տեղից հանի,  
Բայց վախեցած հեռու փախավ,  
Յերբ վոր տեսավ, ահա Զալին  
Կողքի՝ ընկավ լուռ ու տխուր...  
Կուչ եր յեկել այդպես սառած,  
Գըլուխը կախ կրծքի վրա  
Ու ձեռքերը՝ լուռ կարկառած:  
Փոս են ընկել աչքերը խոր  
Լուռ ե լեզուն, բերանը բաց,  
Փայտն ել սառցով կակայ մարմնին  
Այ ձեռքի մեջ ամուր բռնած:  
Ու տալիս ե մեջքը կապտին,  
Դեմքը սառցից թոշնած է խոստ,  
Ընկած ե նա անշունչ ու լուռ,  
Յեվ ազգում ե սարսափ ու վիշտ...  
Գիգոլը՝ լուռ մի պահ կանդնած՝  
Զայն չեր հանում, անզոր եր նա,  
Ու զարմանքից ասես սառած՝

Չուած աչքով նայում եր հա...  
Յեկ նա շուտով ուշքի յեկավ՝  
Ահ ու սարսափ միշտ զգալով,  
Յեկ ուժ առած՝ տեղից թռավ,  
Դեպի գյուղը հարաց տալով...

5.

Շատ ժամանակ անցավ արդեն,  
Շատ բան փոխվեց դեպքի որից,  
Թախիծ ու ցավի տվեց նորեն  
Կյանքի ահեղ պայքարը ինձ:  
Մե մտքերով ահա տարված՝  
Ճամբա ընկա գյուղից հեռու,  
Փախչում եյի դառը մտքից,  
Վոր ինձ հազար վիշտ եր բերում:  
Ու յես տեսա՝ ճամբից հեռու  
Մեն-մենավոր մի գերեզման,  
Տեսա, և յես կանգնեցի լուռ՝  
Լի հարգանքով մի անսահման:  
Մի թումբ եր այն, չուրջը նրա  
Կային այլ թումբ ու բլուրներ,  
Պատել եյին նրան հազար  
Ծաղիկ ու ծիլ՝ վառ և գունեղ:  
Նայում եյին սրտամորմոք՝  
Նրան հեռվից անտառն ու լեռ,  
Ամեն ինչ լուռ եր նրա մոտ,  
Զեյին լավում վշտու ձայներ:  
Գերեզմանի չուրջը՝ խումբ-խումբ  
Փովել եյին ծաղիկ ու սեղ,  
Կանաչ եր ծառ. գետինն ու թումբ՝  
Թավշակուլ ու գեղատես.  
Հովն եր խաղում խաղաղ ու հեղ,  
Սրվովում եր ծաղկանց միջին.  
Ծիծեռնակը յերկնքով մեկ

Ճախրում ուրախ՝ նրանց գլխին:  
Այստեղ կար մի արձան չնչին.  
Այդ արձանին նայելով յես—  
«Աստ հանգչում ե պապիկը ինեղն»,—  
Քարի վրա կարդացի յես:  
Յերբ նայում ես շիրմին տխուր,  
Հուգվում ե խոր՝ սիրտ ու հոգիով,  
Շուրջը նրա՝ դաշտն ամենուր,  
Կարծես ալլած՝ մաքուր եր խիստ:  
Նստած եյին յերկու մանուկ՝  
Աղջիկ-տղա փոքրիկ, բարի,  
Յերբ տղային խնդրեցի յես՝  
Պտույտ յեկանք չուրջը քարի:  
Յեկ նա ասաց.— «Այս քարի տակ՝  
Պառկած ե լուռ մեր պապ Զալին,  
Յեկ թափում ե դառը արցունք  
Մեր հայր Գիգոլն՝ այստեղ գալիս,  
Նրա համար, վոր պապը մեր  
Ուզեցել ե իր թոռնիկին  
Ուսումի տալ, բայց դպրոցից  
Հետ են զարձրել նրան կրկին,  
Զեն ընդունել մեր Գիգոլին,  
Յեկ հետ զալիս պապիկը մեր,  
Յերբ հասել ե հենց այս տեղը՝  
Բուքն ե խեղդել նրան՝ ահեղ:  
Հայրս այսոր ուսում չունի,  
Մեծացնում ե մեղ ամենքիս,  
Յեկ կտեսնեք մեղ կեսորին՝  
Այստեղ նստած՝ դիրք կարդալիս»:

Նորից հարցրի.— «Թող վոր լինի  
Ուսումն այդպես անդին մի բան,  
Դաս եք կարդում շիրմի վրա,


Միթե՞ չկա այլ տեղ ձեր տան»:  
— Տեղ կա՛, սակայն, այստե՛ղ ենք  
մենք...  
Հաճախ այստեղ հաց ենք ուտում,  
Նրա համար, վոր պապ-Զալին  
Սեր ե պահել բարի սրտում.  
Յերբ վոր այստեղ գիրք ենք կարդում՝  
Լսում ե նա միշտ ել խնդում,  
Մեզ սիրում ե լավ կարդալիս,  
Ու ժպտում ե նա իր սրտում:  
Յեվ մենք նրան հույս ենք տալիս,  
Նա չի կարող խինդը ծածկել,  
Ամեն անդամ ձայն ե գալիս,  
Դիտե ծածռակ նա բարեկել:  
Ափո՛ս, ափո՛ս, վոր նա մեռավ,  
Ու չի կարող կանդնել վոտի,  
Թե չե նա լավ տեսնում ե մեզ՝  
Գերեզմանից անչափ մոտիկ:

Նորից հարցը. — «Լսե՞լ եք դուք,  
Ի՞նչ եր ասում ձեր պապ Զալին»:  
— Վոչ, — ասացին, — ձեզ պատմեցինք,  
Թե վոնց բքից նա խեղղվել ե:  
Միթե՞ դուք մեզ չը լսեցիք,  
Մեր պապ Զալին չկա մեզնում,  
Գալիս ե նա ուշ գիշերով,  
Յեվ տեսնում ենք՝ միշտ յերազում:  
Ամեն անդամ յերբ տեսնում ենք  
Նրան վշտոտ, տխուր ու լուռ՝  
Մըթսրթում ե, և գողալով  
Կրակ ե փնտրում մեր բուխարում:  
Մըրմնջում ե ոըրթորթում.  
Տանջո՛ւմ ե լուռ վիշտը նրան,  
Հեծեծում ե ահեղ բքից՝  
Իր Դիգոլի ուսման համար,

Հենց վոր մուլթը հանդչում ե լուռ՝  
Մեր հայացքից կորչում ե նա,  
Վախենում ե ու հեռանում,  
Հոգարածուն վոր շիմանա...

6.

Մանկան խռոքերն իմ մեջ ահա  
Արթնացըրին գառը մտքեր...  
Մտքումս ասի. «Վոնց վոր Զալին՝  
Յես ել մի որ քուն կըմտնեմ.  
Ել ինչո՞ւ յենք կյանքը զոհում  
Ու չենք մեռցնում այն ուժն անարդ,  
Վոր փակում ե գուռը ուսման՝  
Աշխատավոր մարդկանց առաջ:  
Տեսնում ենք, վոր գջլող մարդիկ  
Զեն կշտանում մեր տանջանքով,  
Յեվ այդպիսով կուլ են տալիս  
Մեր ճակատի քրտինքը ծով:  
Ժողովուրդի ուսումն՝ անթեք  
Սուր ե հանգեղ գջլող մարդկանց,  
Վոր փակում են ճամբան մեր դեմ,  
Մեր մեջ արդեն խինդը հանգած:



Շովէ յերկնքում աստղեր յելան, ու դուքս սահեց  
 լուսնյակը լուս,  
 Շուրջը փովեց անտառը մութ, փարվեց մոր պես՝  
 յերկիր-վորգուն,  
 Յերկիրն որվա կյանքից հոգնած՝ հանգստանալ ուզեց  
 հրես...  
 Մի՛ աղմկիր, սիրուն բալաս, դո՛ւ ել անուշ քուն կը  
 մտնես:  
 Իաշաը լոեց, ու բողեներ սահում են լուս, յերանելի,  
 Ել չի՛ լսվում ժըկժըկոցը՝ աղմկահույզ յերամների,  
 Էլուս քնի մեջ՝ յերազներով բոլորն առան նոր խինդ  
 անտես,  
 Ու քո սիրտն ել յերազներով կը չողողա, թե վոր  
 քնես:  
 Միայն այնտեղ, առվի ափին, սոխակն անուշ յերդ և  
 ասում,  
 Ու մտքերը՝ լուս արքեցած՝ անվերջ դեպի նա յեն  
 վազում:  
 Յես ել գիտեմ յերգեր հյուսել, յերբ խնդություն  
 պատում ե ինձ...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս վոտանավորը 1885 թ. պատրաստ  
 շարված եր մանկական «Նորաթի» ամսագրի համար, սակայն  
 դրաքննությունն արգելեց: Հեղինակն այս բանաստեղծությունը  
 նվիրել ե իր յեղորդողուն: Բանաստեղծությունն առաջին ան-  
 գամ տպագրվել ե «Թատրոն ու կենցաղ» ամսագրում՝ 1919 թ.:

Բավէ, վորդի՛ս, «աղու» ասես, յետ մի՛ մնա անուշ  
 քնից:  
 Միշտ քեզ սիրող ու փայփայող քո հորեղբոր լի  
 հույսն ես զու,  
 Կյանք եմ տալիս, վոր մեծանաս, լինես յերկրիդ զու  
 լուսատու,  
 Ու քեզ զոհես հայրենիքիդ, տանջանքներից չվախենաս,  
 Մի՛ ըշտապիր, հիմի արդեն պետք ե քնես, անո՛ւշ  
 բալաս:  
 Քո մեջ արյունն հերոսական՝ յեռ ե գալիս  
 հրավառված,  
 Տղամարդու նման՝ կրկին դո՛րծ կատարիր զու  
 փառապանձ:  
 Այդպե՛ս ահա ձեռք կրերես յերկրի հերոս անունը վես.  
 Հսպասի՛ր զու, ժամը կըզա՛... հիմի պետք ե անուշ  
 քնես:  
 Ժամանակի ընթացքն ու դարձն ինձ չեն կարող զրկե՛  
 կամքից,  
 Դավ կըզնի բիրտ թշնամին, վոր ինձ զրկի իմ այս  
 կյանքից,  
 Բայց կը գծեմ յես դարձյալ հետք ու ճանապարհ՝  
 յեղած անտեր,  
 Բնի՛ր, քանի դու հակառակ դարձը յերկրի՝ չես  
 նկատել:  
 Յեվ յերբ դառնաս պատերազմից հաղթանակով դու  
 պսակված,  
 Յերկրիդ հերոս մարդկանց վարող՝ դրոշն հզոր  
 ձեռքիդ պահած,  
 Ինձ ավետիր՝ գերեզմանիս, վոր ջնջվել ե թշնամին  
 նենդ,  
 Վորից հետո՝ յե՞ս ել անուշ, հավերժական քուն իւ  
 մտնեմ:

# ՅԵՐԳ



## ԱՌԱՎՈՉՅԱՆ

Մի՛ ծուլանա՝ տարված քնով,  
Վե՛ր կաց, բվա՛ զեմքը ջրով,  
Թե վոր մնառ գու անլվա,  
Տե՛ս, կնայեն քեզ ծաղրանքով:

Լվա՛, մաքրի՛ր ատամն ու լինդ,  
Մի՛ յենթարկիիր անուշ քնիդ,  
Յերկրիդ խնդրիր, վոր քեզ սիրի,  
Վորպես վորդի ծաղկափթիթ:

Տղաս, թե վոր յերկար քնես,  
Դիացիր, կատեն բոլորը քեզ,  
Յեղիր արթուն ու ջանասեր,  
Վոր բոլորի կողմից սիրվես:

Ով սիրում ե շատ յերկար քուն,  
Դասն անսպատճառա՝ կրնստի առւն,  
Ծնողնե՛րն ել չեն սիրելու  
Այդպիսի փուծ ու ծույլ վորդուն:

Ով վոր այդպես անկարգ մընա՝  
Մի՛ մոտենա յերբեք նրան.  
Նրա՛ն սիրիր ու վատահիր,  
Ով սիրում ե ուսումն ու վարք:

Յեվ ուսուցչիդ միշտ ել լսիր՝  
Ամեն անդամ, ամեն դասին,  
Ով վոր տեսնի կըսիրի քեզ  
Ու «ջանասե՛ր» միշտ ել կասի:

Դու ծուլացար, հետ մնացիր,  
Դասարան շուտ չդնացիր,  
Հավաքվեցին, տես դպրոցում,  
Ջանդը արդեն հնչեցրին:

Մի՛ ծուլանա՝ տարված քնով,  
Վե՛ր կաց, լվա՛ զեմքը ջրով,  
Վազ տուր շուտով դեպի դպրոց  
Նոր յեռանդով ու ծիծաղով:

# ԿԱՐ ԱՆՈՂ ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՅԵՐԳԸ



Հետ չմնանք գործից արդար,  
Ժպտաց արփին ողում հստակ,  
Ու վաղորդյան հովից անուշ  
Փթթեցին վարդն ու մանուշակ:

Մենք ձեռք զարկինք ձեռագործին,  
Մի աղամ ել անուշ յերգենք.  
Փա՛ռք սիրելի արդար գործին,  
Զե՞նք սիրում մենք կեղծ գործն յերբեք:


Աշխատանքը խինդ ե տալիս  
Յեկ զորացնում ուշիմ մարդուն,  
Չունեցողին հաց ե տալիս,  
Ինչ վոր ունի՝ կըրկնապատկում:

Հետ չմնանք գործից արդար,  
Յեկ աշխատենք՝ ձեռքը-ձեռքին,  
Ուսման համա՛ր, միայն ուսմա՛ն—  
Այստեղ յեկանք ահա կըկին:

Ով վոր ուսման ու գործի մեջ  
Յե՞վ ուշիմ ե և՛ ջանասեր,  
Նա՛ կը լինի շատ-շատերի  
Նաև վորպես սիրված ընկեր:

Միշտ ել գործը լավ ու արդար՝  
Թշնամի՛ յե աղքատության.  
Ով սուրբ գործում ուժ կըդնի՝  
Նա՛ յե միայն սիրո արժան:

# ՏԱՏԻԿՆ ՈՒ ԹՈՌՆԻԿՆԵՐԸ



Գաղանի պես մի վիրավոր,  
Վոր խոր ցալից խռու վառնում է,  
Սար ու ձորում վողրի ձայնով,  
Հողմը անքուն մանչում է:


Մերթ թնդում է ահեղ ձայնով,  
Չյունը ցրում ոտք ու ձորում,  
Մերթ ել ուժեղ ծափեր տալով՝  
Հոկա ծառերն է որորում:

Մերթ հեծկլսում է զռան մոտ,  
Սըբսըրթում է ցրտից առես,  
Տաքուկ անկյան անչափ կարոտ՝  
Աղերսում է, վոր մտնի ներս:

Կրակի առաջ հանգիստ նստած՝  
Պատմում է տատն իր թռոնիկին.  
Նա լավ դիտե պատմել առակ՝  
Յել հեքյաթներ՝ պես-պես ու հին:

Յեկ լսում են նրան անձայն՝  
Թռոնիկները սիրով կրկին.  
Նստոտելով կկլի նման՝  
Իրենց սիրած տատի կողքին:

Մերթ խորհում են հուզումնալից...  
Մերթ ել հանգիստ ու լուս ժպում,  
Յերբ հոգնում են, ահա նորից  
Ժամի ծնկոն քուն են մտնում:



Յերբ մնացի մեն ու մենակ,  
 Յեվ ձանձրացա ինքըս ինձնից,  
 Յես բաց արի դուռը՝ արագ,  
 Անցա առվի ա'փը նորից:  
 Ամուանն՝ առուն այդ սարերից  
 Խոխոջալով վազում եր ցած,  
 Շիթերն արծաթ՝ սալ-քարերին  
 Շաղ եր տալիս մարդարտացած:  
 Խաղ եր անում թփերի հետ՝  
 Լուռ տարածված նրա ափին,  
 Ծաղիկներին այն հոտավետ՝  
 Ցող-մարդարիս շարում կրկին:  
 Ու սոխակի դայլայլն անուշ  
 Տարածվում եր հեռվից հեռուն,  
 Տարվո՞մ եյին դաշտն ու անտառ՝  
 Դայլայլներով այդ որորուն:  
 Այսոր, սակայն, չի դարդարված  
 Ծաղիկներով ափը նրա,  
 Սառուցի տակ արգելակված՝  
 Վողը ե ասում նա իր վրա:  
 Հողի տակից լսվում ե խոռ  
 Նրա վշշոցն ահա ուժդին,  
 Մերթ դառնում ե թույլ ու տխուր,  
 Մերթ ել վորպես անուշ դայլայլ:

Յես կանգնած եմ գլխին նրա,  
 Մտածում եմ. «կանցնի՛ ձրմեռ,  
 Յեվ կարթնացնի մայր-բնությանն՝  
 Արեվը վառ և անհամբեր:  
 Յեվ կարթնանա իմ առուն ել,  
 Գեղեցկությամբ կըզարդարվի,  
 Կը ճռվողեն նրա ափին  
 Հավքերն ուրախ ու սելվաչվի:  
 Բայց ուրիշ ե մարդը անզոր,  
 Ուրիշ կյանքով ապրում ե նա,  
 Հենց վոր սիրաը դադար առնի՛  
 Այնուհետեւ չի՛ արթնանա»:



Մի ուրախալի մայիսյան յերեկո, ամբողջովին քրտնակոլու, Նիկոն վոգեռությամբ իր մոր ծնկներին ընկավ և գոչեց.

— Մայրիկ, գիտե՞ս ձեռքումս ինչ կա:

— Գիտեմ. դա արտուտն ե: Լոիր, վո՞րտեղից պտար:

— Այս առավոտ այդու ցանկապատի մեջ դտա: Նստեցի ցանկապատի տակ, սպասում եյի ու սպասում... Տեսնեմ՝ թը՛ռու... Թփրտոց լսվեց և հանկարծ այս սատանա ծիտիկը թռավ իր բույնը: Յես սուս կացա. դանդաղ և զգույշ վեր յերա, ծածուկ մոտեցա նրան, և... գլխարկովս ծածկեցի բույնը: Հետո ձեռքս մտցրի գլխարկիս մեջ և դուրս հանեցի իմ ծիտիկին:

— Միթե՞ միայն դա յեր այնտեղ:

— Սրա ձագերն ել այնտեղ եյին, մայրիկ: Նրանք փոքրիկ, գեղևս անփետուր ու մերկ եյին, դրա համար ել նրանք ինձնից չեն կարող փախչել:

— Իսկ ինչի՞դ ե պետք այդ ծիտիկը:

— Ուզում եմ վանդակը զնել և սենյակում կախել: Զետո ի՞նչ կլինեն նրա վորբացած ձագուկ-ները:

— Ուզում եմ նրանց ել բերել այստեղ և մեծացնել: Յես հենց հիմա պետք ե վազ տամ նրանց մոտ:

— Եհ, դու ուզում ես ինձ նեղացնել... նրա համար, վոր ել չես կարող համենել նրանց բերելու... .

— Զե, մայրիկ, նրանք հեռու չեն: Լոիր ինձ, դու գիտե՞ս իմ մեծ սալորենին: Նրանք հենց դրա դիմացն են: Տեղը լավ գիտեմ:

— Դրա ժամանակը չե: Բանն այն ե, վոր քեզ բոնելու յեն գալիս:

— Ինձ բոնելո՞ւ, ի՞նձ:

— Այս, քեզ բոնելու: Նախ հայրիկիդ կտանեն և ապա կղան քեզ ու քո քրոջը տանելու:

— Վա՛յ, մայրիկ, ի՞նչ են ուզում մեզնից:

— Զեզ կբանտարկեն փոքրիկ սենյակում և այնտեղից դուրս գալու իրավունք այլևս չեք ունենա: Ուրիշ վատ բան չեն անի ձեզ. ամեն որ կխմեցնեն ու կուտեցնեն: Սակայն այլևս դու չես կարող վազվզել և ինձ տեսնել:

Տղան սկսեց լաց լինել:

— Ի՞նչ յեղավ, վորդիս, ի՞նչ պատահեց: Միթե՞ այդքան սարսափելի յե արգելանոցում մնալ, յերբ ամեն ինչ կունենաս այնտեղ:

Վորդին սկսեց հեկեկալ և մորն այլևս չկարողացավ պատասխանել:

— Նրանք կլարվեն հորդ, քեզ ու քրոջդ հետ այնպես, ինչպես դու յես վարվում այդ ծիտիկի և դրա ձագուկների հետ:

Աչքերը արցունքով լցված մանուկը մի պահ մտածեց և ապա բացականչեց.

— Հա՛յ, յես հենց հիմա բաց կթողնեմ իմ արտուտիկին, — բուռը բացեց, և թոշունն ուրախությամբ թռավ պատուհանից:

— Հանգստացիր, իմ հույսն ու ապավեն: Քեզ փորձելու համար միայն տասցի այս փոքրիկ հեքիթը: Վոչ հորդ, վոչ քեզ և վոչ ել քրոջդ չեն բանտարկի:

Ուրախացած մանուկն այսպես  
Միշտ նստում եր թավ թփի քով,  
Յեվ իր կողմից գերված ծտին  
Ասում եր նա փաղաքշանքով.

— Կկանդնեյի բնիդ պահակ,  
Ծիտիկ, հանդում, այսպես յերկար.  
Հիմա արդեն վերջին անդամ  
Հաջողությամբ ձեռքըս ընկար:

Մըվծվում են ձագերը քո,  
Կեր են ուզում, կեր՝ ամենքից.  
Սիրող զգում ե ցավ ու մորմոք,  
Բան չի գալիս քո թույլ ձեռքից:

Չուր են փորձում նրանք թոշել—  
Զագուկները խեղճ ու կրակ.  
Ասա ինձնից վո՞նց կազմատվեն—  
Թեկից, փետրից նրանք զրկված:

Այդ ժամանակ ծառի ճյուղին  
Նստեց արու ծիտը տիսուր  
Յեվ վողբն արեց մայր ծիտիկի,  
Թափեց արցունք, լաց ու մրմուռ:

Ասում եր նա մանկան.— «Հիշի՛ր,  
Դո՛ւ ել մայրիկ ունես սիրած,  
Հոգ ե տանում ամեն ըոպե՛  
Քեզ, սիրելի վորդուդ ահա:

Ի՞նչ կապակի, վոր մենք ապրենք,  
Մենք ել լինենք այս աշխարհում,  
Ծըլվըլալով քեզ կգերենք,  
Վոր սավառնենք ողում, հանգում:

Բա՛ց թող գերված քո ծիտիկին,  
Դարձրու ազատ ու անկաշկանդ,  
Ծնողները քեզ կսիրեն,  
Դու կունենաս լավ կյանք ու բախտ:

Մանուկն ասես լսեց, խղճա՛ց  
Ձեռքում պահած խեղճ ծիտիկին,  
Հիշեց նաև այդ ժամանակ  
Շատ սիրելի իր մայրիկին:

Յեվ մտածեց.— «Վոնց վոր յես եմ  
Սիրում, պաշտում մորըս անդին,  
Այս ձագուկներն ել սիրում են  
Իրենց մորը խիստ թանկադին:

Չե, ծիտիկին պիտի թողնեմ,  
Թող վոր ճախրի՛ յերկնքում բաց,  
Ուրախանա ու սավառնի՛  
Զագուկների գործով տարված:

Միշտ յերգ ասի ձագուկներին,  
Յերգը թովիչ և անմեկին,  
Նրանց յերգի վանկերն անուշ՝  
Հըրապուրի՛ն միշտ ամենքին»:

Մատծելուց նա դադարեց  
Ու ծիտիկին թողեց ձեռքից,  
Ռւբախացած ծիտիկն այսպես  
Թուալ-անցավ այգու կողքից:

Աղտակու համար՝ մանկան  
Բարի մաղթեց ծլլալով,  
Նստեց բնում, յերգեց յերկար  
Ու ծլլաց անուշ ձայնով:

Պատ . խմբագիր՝ վեսպեր  
Տեխ . խմբագիր՝ Ան . Գասպարյան  
Սըբագրիչ՝ Թ . Հովհակիմյան



Գլավվիտի լիազոր Զ—3590 Հրատ . 4554 ·

Պատվեր 255 · Տիրաժ 3000 ·

Թուղթ 62×94 · Տպագր . 3 մամ .

Մեկ մամ . 24 , 480 նշան .

Հանձնված է արտադրության 15 մարտի 1938 թ .

Ստորագրված է տպագրության համար 27 մայիսի 1938 թ .

Պետհրատի 1 տպարան , Յերևան , Խնինի 65 ·



1403Р

ԳԻՒԸ 1 Ռ. 50 Կ.

1971

804

1  
2

ЦАХЕЛИ  
ПРИКЛЮЧЕНИЯ ШАЛВА  
ГИЗ АРМ. ССР. ЕРЕВАН